ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Ալավերդի
Երկու հազար տասնվեց թվականի օգոստոսի տասնութին

Մի կողմից՝ **Միհեր Բորիսի Մակիչյանը**, ծնված՝ 26.01.1976թ., անձնագիր՝ AM0467813, տրված՝ 13.10.2011թ., 010-ի կողմից, հաշվառված՝ ք. Երևան, Ալ. Մանուկյան փ., շ. 15, բն. 9, ում անունից համաձայն **09.08.2016թ.** տրված N 1756 լիազորագրի հանդես է գալիս **Ալբերտ Լևոնի Սարգսյանը**, ծնված՝ 20.04.1961թ., անձնագիր՝ AK0400019, տրված՝ 18.11.2009թ. 055-ի կողմից, հաշվառված՝ Լոռի, Ալավերդի, Էնգելսի փ., 18 շ., 12 բն., այսուհետ **«Վարձատու»**

և մյուս կողմից՝ **Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը**, ի դեմս սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի ղեկավար **Մինաս Մինասյանի**, ում անունից համաձայն **10.08.2016թ.** տրված N **ՄՄ/8868-16** լիազորագրի հանդես է գալիս Թումանյան սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ **Անդրանիկ Սերյոժայի Մելիքսեթյանը**, ծնված՝ 11.11.1961թ., անձնագիր՝ AM0563023, տրված՝ 13.12.2011թ. 055-ի կողմից, հաշվառված՝ Լոռու մարզ, գյուղ Շնող 6 փ., տ. 16, այսուհետ **«Վարձակալ»**

Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը, իսկ Վարձակալը պարտավորվում է օգտագործել այդ գույքը և ժամկետի ավարտից հետո վերադարձնել:

1.2.Վարձատուն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում **Մարզ Լոռի, համայնք Ալավերդի ք. Սայաթ Նովա փողոց 3/8** հասցեում գտնվող **0.0768 հա** մակերեսով հողամասի, **նախկին շրջխորհրդի շենքի 2-րդ հարկում գտնվող 8, 9, 19, 20, 21 և 22 սենյակները՝ 151,7 քմ մակերեսով,** համար 1-5 տարածքները (սան. հանգույց և միջանցք) տրվում է ընդհանուր օգտագործման, ըստ պայմանագրին կից ներկայացված **05.07.2016թ.** Ալավերդի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

1.3.Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից **26.07.2016թ.** տրված **№ 26072016-06-0035** սեփականության վկայականի (հողամասի ծածկագիր՝ 06-002-0027-0039, շինության ծածկագիր՝ 06-002-0027-0039-001) :

Նշված անշարժ գույքն ազատ է երրորդ անձանց իրավունքներից (այլ անձանց վաճառված,նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում), համաձայն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռի տարածքային ստորաբաժանման կողմից **09.08.2016թ.** տրված N ՄՏ-**09082016-06-0186** միասնական տեղեկանքի:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ.

Շենքի ներսում առկա են ինքնակամ տեղադրված միջնորմեր: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,084 հա, որից տվյալ մասի բաժնեմասը կազմում է 768,0 քմ:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<u>Վարձատուն իրավունք ունի</u>

2.1. Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան, կատարել ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

2.2. Վարձակալից պահանջել Գույքը պահել սարքին և պատշաճ վիճակում:

<u>Վարձատուն պարտավոր է՝</u>

2.3 Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո երկու օրվա ընթացքում:

2.4. Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.5. Վարձակալին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին:

2.6 Վճարել գույքահարկը :

<u>Վարձակալը պարտավոր է</u>

2.7. Գույքը երրորդ անձի օգտագործմանը հանձնել միայն վարձատուի գրավոր համաձայնությամբ:

<u>Վարձակալը պարտավոր է՝</u>

2.8. Գույքը պահպանել սարքին վիճակում և օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.9.Կատարել էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսային, աբոնենտային և հարկային այլ վճարումներ:
2.10.Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր պատկանելիքներով:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Կողմերի համաձայնությամբ անշարժ գույքի վարձակալության *ժամկետը սահմանվում է 01.08.2016 թվականից մինչև 31.12.2018 թվականը:*

3.2. Վարձավճարի չափը ամսեկան կազմում է **100 000 / մեկ հարյուր հազար / ՀՀ** դրամ, որը վարձակալը պարտավորվում է փոխանցել վարձատուի <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ում գտնվող 16048159995100 հաշվեհամարին յուրաքանչյուր հաջորդ ամսվա մինչև ամսի 15-ը: Ելնելով շուկայական հարաբերությունների հետագա փոփոխություններից կողմերը երկկողմանի համաձայնությամբ կարող են փոփոխել վարձավճարի չափը:

3.3. Սույն պայմանագրի կնքման հետ կապված վճարումը կատարվում է Վարձակալի կողմից:

3.4.Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից: Պայմանագրի ժամկետից շուտ լուծելու դեպքում կողմերը միմյանց պարտավոր են տեղյակ պահել մեկ ամիս առաջ:

3.5. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են կողմերի կողմից վավերացրած են նոտարի կողմից և գրանցված են անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում:

3.6. Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են. ամբողջովին գիտակցում և հասկանում են պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով՝ անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ, պայթյուն, հրդեհ, երկրաշարժ, այլ տարեկան աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ, զինված հարձակում, զանգվածային անկարգություններ, մայրուղային խողովակաշարերի վթար կամ այլ նման իրադարձություններ:

4.2 Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվություններից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագրի կնքումից հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխագուշակել և, որի պատճառով վարձակալը չի կարող շարունակել հողի բնականոն օգտագործումը:

4.3 Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավելի երկարաձգվելու կամ դրա հետևանքները 6 ամսվա ընթացքում չվերացվելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է Թումանյան նոտարական տարածքի նոտարի գործերում, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին:

5.2 Պայմանագիրը ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում երեսուն օրվա ընթացքում:

5.3 Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում և ձևակերպում են լրացուցիչ համաձայնագրերով:

5.4 Պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

«Վարձատու»
Մհեր Բորիսի Մակիչյան
Լիազորված անձ՝
Ալբերտ Լևոնի Սարգսյան

Սարգսյան Ալբերտ Սարգսյան

«Վարձակալ»
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Լիազորված անձ՝
Անդրանիկ Սերյոժայի Մելիքսեթյան

Երկու հազար տասնվեց թվականի օգոստոսի տասնութին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Ալավերդի քաղաքի <<Թումանյան>> նոտարական տարածքի նոտար Արծրունի Մաղաքյանիս կողմից :
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև /իրավաբանական անձի/ նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:
ՀՀ Քաղ.օրի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է գրանցամատյանում N 1859
Գանձված է տուրք և ծառայության
վճար համաձայն <<Պետական տուրքի
մասին>> և <<Նոտարիատի մասին» ՀՀ
օրենքների:

ՆՈՏԱՐ՝ Ա. ՄԱՂԱՔՅԱՆ

Լոռի Սպիտակ Սայաթ-Նովա 3

Մարզ համայնք հասցե



1.2-րդ հարկ

H-3.25

h-2,95

D-0.5

d-0.1

Կատարող Սամվել Նիազյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

<< ԱԿԱ - ԳՐՈՒՊ >> ՍՊԸ

Նոտարական ակտի կոդ: 598-20181103-117-3185359
Նոտարական ակտի գաղտնագիր: W35JRO

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Ալավերդի
երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի երեքին

Մի կողմից՝ **ՄՀԵՐ ԲՈՐԻՍԻ ՄԱԿԻՉՅԱՆԸ**, ծնված՝ 26/01/1976թ-ին, ՀԾՀ՝ 3601760061, անձնագիր՝ AM0467813, տրված՝ 010-ի կողմից, 13/10/2011թ-ին, հաշվառված՝ Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ Փ., 15 /ՏԱՍՆՀԻՆԳ/ Շ, 9 /ԻՆԸ/ ԲՆ հասցեում, (Վարձատու, այսուհետ <<Կողմ 1>>)

և մյուս կողմից՝ **«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը** /գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. /13/ ի դեմս տնօրեն՝ **ՎԱՆԻԿ ՄԱՔՍԻՄԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ**, ում անունից համաձայն **22/10/2018 թվականին տրված N ՎԲ/ՀՌԱ/25442-18** լիազորագրի հանդես է գալիս **ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԸ**, ծնված՝ 11/11/1961թ-ին, ՀԾՀ՝ 2108610073, անձնագիր՝ AM0563023, տրված՝ 055-ի կողմից, 13/12/2011թ-ին, հաշվառված՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ԳՅՈՒՂ ՇՆՈՂ, 6 /ՎԵՑ/ Փ., 16 /ՏԱՍՆՎԵՑ/ Տ հասցեում, (Վարձակալ, այսուհետ <<Կողմ 2>>),
<<այսուհետ միասին կանվանվեն Կողմեր>>

1. Համաձայնագրի առարկան
1.1. Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին իրենց միջև <<Թումանյան>> նոտարական տարածքում **18/08/2016թ.** կնքված **N 1859** ռեեստրի գրանցման համարով անշարժ գույքի վարձակալության պայմանագրում կատարել փոփոխություններ և լրացումներ, և կնքեցին սույն Լրացուցիչ համաձայնագիրը՝
Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
Կողմերի համաձայնությամբ անշարժ գույքի վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25/12/2019 թվականը:
2.Համաձայնագրի գործողության ժամկետը
2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրելու, նոտարական վավերացման և պետական գրանցման պահից:
2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:
2.3. Սույն համաձայնագրի և պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն համաձայնագիրը:
3. Այլ պայմաններ
3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի համաձայնությանբ:
3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ օրենսդրության համապատասխան:
3.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:
3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև պայամանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վաճերի լուծումը կատարվում է դատարանի միջոցով:
3.5. Սույն համաձայնագրի վավերացման և պետական գրանցման հետ կապված վճարումները կատարվում են վարձակալի կողմից:
3.6. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով 4 (չորս) օրինակներից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Առաջին օրինակը պահվում է <<Լոռու մարզ>> նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում են կողմերին:
3.7. Սույն համաձայնագիրը երեսուն աշխատանքային օրվա ընթացքում ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումում:

Կողմերի ստորագրությունները՝

<<Կողմ 1>>

ՄՀԵՐ ԲՈՐԻՍԻ ՄԱԿԻՉՅԱՆ

<<Կողմ 2>>

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին

Լիազորված անձ՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Ալավերդի
երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի երեքին՝
Սույն լրացուցիչ համաձայնագիրը վավերացված և իմ՝ ՀՀ <<Լոռու մարզ>> նոտարական տարածքի նոտար Արծրունի Շարբաթի Մաղաքյանիս կողմից: Կողմերը լրացուցիչ համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են: Իմ կողմից վավերացված սույն լրացուցիչ համաձայնագիրը ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Գրանցված է սեղանամատյանում 3193

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Արծրունի Շարբաթի Մաղաքյան

Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «19» Նոյեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Ալավերդի Ալավերդի ք. Սայաթ-Նովայի փողոց 3/8

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համաձայնագիր Անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 03/11/2018թ. սեղանամատյան թիվ 3193, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 03102016-06-0016

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	06-002-0027-0039-001	Նախկին շրջխորհրդի շենք	154.5 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Անշարժ գույքի վարձակալության ժամկետը սահմանված է մինչև՝ 25.12.2019թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անի Պետրոսյան

զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 9 դեկտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Ալավերդի Ալավերդի ք. Սայաթ-Նովայի փողոց 3/8 նախկին շրջխորհրդի շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 19112018-06-0013, Համաձայնագիր անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 04/12/2019թ. սեղանամատյան թիվ 3518

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 09122019-06-0021, գաղտնաբառ՝ VLNRRHBHWWAP

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-002-0027-0039-001	Նախկին շրջխորհրդի շենք	154.5 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Անշարժ գույքի վարձակալության ժամկետը սահմանված է մինչև՝ 25.12.2020թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անի Պետրոսյան

Հբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 09122019-06-0021, գաղտնաբառ՝ YLNRRHBHWWAP

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 598-20191204-117-4345906
Նոտարական ակտի գաղտնագիր: J4DXMB

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Ալավերդի
երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի չորսին

Մի կողմից՝ **ՄՀԵՐ ԲՈՐԻՍԻ ՄԱԿԻՉՅԱՆԸ**, ծնված՝ 26/01/1976թ-ին, ՀԾՀ՝ 3601760061, անձնագիր՝ AM0467813, տրված՝ 010-ի կողմից, 13/10/2011թ-ին, հաշվառված՝ Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ Փ., 15 /ՏԱՍՆՀԻՆԳ/ Շ, 9 /ԻՆԸ/ ԲՆ հասցեում, (Վարձատու, այսուհետ <<Կողմ 1>>)

և մյուս կողմից՝ **«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը** /գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. /13/ ի դեմս տնօրեն՝ **ՎԱՆԻԿ ՄԱՔՍԻՄԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ**, ում անունից համաձայն **26/09/2019 թվականին տրված N 02/12-1/23010-2019** լիազորագրի հանդես է գալիս **ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԸ**, ծնված՝ 11/11/1961թ-ին, ՀԾՀ՝ 2108610073, անձնագիր՝ AM0563023, տրված՝ 055-ի կողմից, 13/12/2011թ-ին, հաշվառված՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ԳՅՈՒՂ ՇՆՈՂ, 6 /ՎԵՑ/ Փ., 16 /ՏԱՍՆՎԵՑ/ Տ հասցեում, (Վարձակալ, այսուհետ <<Կողմ 2>>),
<<այսուհետ միասին կանվանվեն Կողմեր>>

1. Համաձայնագրի առարկան
1.1. Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին իրենց միջև <<Թումանյան>> նոտարական տարածքում **18/08/2016թ.** կնքված **N 1859** ռեեստրի գրանցման համարով անշարժ գույքի վարձակալության պայմանագրում կատարել փոփոխություններ և լրացումներ, և կնքեցին սույն Լրացուցիչ համաձայնագիրը՝
Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
<<Կողմերի համաձայնությամբ անշարժ գույքի վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25/12/2020 թվականը>>,
և պայմանագրում կատարել 4.4 կետի լրացում.
<<Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ <<Անշարժ գույքի վարձակալության>> պայմանագրով վարձակալության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանգիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝ ցանկացած ժամանակ>>:
2.Համաձայնագրի գործողության ժամկետը
2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրելու, նոտարական վավերացման և պետական գրանցման պահից:
2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:
2.3. Սույն համաձայնագրի և պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն համաձայնագիրը:
3. Այլ պայմաններ
3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի համաձայնությանբ:
3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ օրենսդրության համապատասխան:
3.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:
3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև պայամանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վաճերի լուծումը կատարվում է դատարանի միջոցով:

3.5. Սույն համաձայնագրի վավերացման և պետական գրանցման հետ կապված վճարումները կատարվում են վարձակալի կողմից:
3.6. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով 4 (չորս) օրինակներից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Առաջին օրինակը պահվում է <<Լոռու մարզ>> նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում են կողմերին:
3.7. Սույն համաձայնագիրը երեսուն աշխատանքային օրվա ընթացքում ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումում:

Կողմերի ստորագրությունները՝

<<Կողմ 1>>

ՄՀԵՐ ԲՈՐԻՍԻ ՄԱԿԻՉՅԱՆ

<<Կողմ 2>>

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին

Լիազորված անձ՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Ալավերդի
երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի չորսին
Սույն լրացուցիչ համաձայնագիրը վավերացված և իմ՝ ՀՀ <<Լոռու մարզ>> նոտարական տարածքի նոտար Արծրունի Շարբաթի Մաղաքյանիս կողմից: Կողմերը լրացուցիչ համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են: Իմ կողմից վավերացված սույն լրացուցիչ համաձայնագիրը ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Գրանցված է սեղանամատյանում 3518

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Արծրունի Շարբաթի Մաղաքյան